



**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

11 մարտի 2013 թվականի թիվ 4-Ա

ք. Երևան

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ
ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՎԵՐԳԵՏՆՅԱ ԵԹԵՐԱՅԻՆ
ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԱՍԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ
ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 9-րդ, 10-րդ մասերով և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը *որոշում է*.

Հաստատել

«Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմաններ ապահովելու գնահատման մեթոդաբանությունը»՝ համաձայն հավելվածի:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ**

Գ. ԱՄԱԼՅԱՆ

Հաստատված է
Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի
2013 թվականի մարտի 11-ի թիվ 4-Ա որոշմամբ

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ
ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՎԵՐԳԵՏՆՅԱ ԵԹԵՐԱՅԻՆ
ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԱՍԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ
ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Սույնով սահմանվում է Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա էթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների (այսուհետ՝ ընկերություններ) կողմից համամասնական ընտրակարգով մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը:
2. Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) ընկերությունների հեռարձակած ծրագրերի ՀՀ ընտրական օրենսդրությանը համապատասխանության մշտադիտարկումն իրականացնում է.
 - հեռուստառադիոծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) անմիջական դիտարկման արդյունքների.
 - գրանցամատյանների և ընկերություններից ստացված տեղեկատվության.
 - ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության.

- ընկերությունների կողմից ՀՀ ընտրական օրենսդրության խախտումների մասին լրատվամիջոցների հրապարակումների.
 - պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների հանձնաժողով ներկայացրած կամ հրապարակած տեղեկատվության ուսումնասիրության հիման վրա:
3. Ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար և վճարովի կարգով տրամադրված եթերաժամի մշտադիտարկումն իրականացվում է հրապարակված վճարովի եթերաժամանակի սակագնի սահմանման և եթերաժամանակի տրամադրման կարգի՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի պահանջներին համապատասխանության ուսումնասիրմամբ: Դիտարկողը գնահատում է՝
- վճարովի եթերաժամի սակագնի և հայտարարման ժամկետի օրենքի պահանջներին համապատասխանությունը.
 - նախընտրական քարոզչության ընթացքում սակագնի անփոփոխությունը.
 - տրամադրվող եթերաժամանակի և դրա հեռարձակման ժամի համապատասխանությունը ոչ խտրական սկզբունքին.
 - ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ներկայացրած նյութի հեռարձակելը մերժելու հիմքերի իրավաչափությունը (պատշաճ հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը):
4. Ընկերությունների կողմից հեռարձակված հեռուստառադիոհաղորդումն ուսումնասիրելիս, բացառությամբ ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար և վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակի, դիտարկողը գնահատում է՝
- ընտրությունները լուսաբանողի, հեռուստառադիոհաղորդումը վարողի, եթերում հանդես եկող ընկերության աշխատակցի ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակում ընդգրկված որպես թեկնածու գրանցված լինելու հանգամանքը.
 - լրատվական թողարկումներում և հասարակական-քաղաքական հաղորդումներում ընտրություններին մասնակցող կուսակցությունների,

կուսակցությունների դաշինքների նախընտրական քարոզչության միջոցառումների լուսաբանումը գնահատականներից զերծ և անկողմնակալ լինելու հանգամանքը, լուսաբանման հավասարության և ոչ խտրական սկզբունքի պահպանումը.

- քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող, պետական կամ համայնքային ծառայող հանդիսացող ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների գործունեության լուսաբանման համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածի պահանջներին, պաշտոնական և այլ գործունեության լուսաբանման տարանջատվածությունը.
- ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին ընկերության հեռարձակած հաղորդումներին և հաղորդաշարերին մասնակցության հավասար հնարավորություն ընձեռելու հանգամանքը.
- ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների մասնակցությամբ հաղորդումներում և հաղորդաշարերում լրագրողի, հեռուստառադիոհաղորդումը վարողի, եթերում հանդես եկող ընկերության աշխատակցի անկողմնակալ լինելու հանգամանքը.
- գեղարվեստական, փաստավավերագրական, անիմացիոն ֆիլմերում, տեսա-հոլովակներում, ձայնագրություններում, առևտրային գովազդում, ընկերության այնպիսի հաղորդումներում, որոնք նվիրված չեն ընտրությունների լուսաբանմանը, ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու չհանդիսացող անձի կողմից, այդ թվում՝ նաև ինտերակտիվ եղանակով, նախընտրական քարոզչություն իրականացնելու հանգամանքի առկայությունը (թեկնածուների գործունեության, քաղաքական և (կամ) նախընտրական ծրագրերի հիշատակելը, ներկայացնելը, գնահատական հնչեցնելը, համեմատություն իրականացնելը, ինչպես նաև կողմ կամ դեմ քվեարկելու կոչով հանդես գալը), ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների խորհրդանիշերի և կարգախոսների առկայությունը.

- ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքների հրապարակման համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի պահանջներին.
- քվեարկության օրը մինչև ժամը 20.00-ն ընտրողի տված քվեի մասին հարցման հրապարակման առկայության հանգամանքը.
- քվեարկության օրը և դրան նախորդող օրը քարոզչական նյութի՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ ցանկացած այլ ձևով նախընտրական քարոզչության իրականացման առկայության հանգամանքը:

5. Նախընտրական քարոզչության ընթացքում և դրա ավարտից հետո հաշվարկվում են՝

- նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններից, կուսակցությունների դաշինքներից *յուրաքանչյուրին առանձին* ընկերության կողմից անվճար և վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը, այդ ընկերության հաղորդումներին նրանց մասնակցության, ինչպես նաև նրանց նախընտրական քարոզչական գործունեության լուսաբանման տևողությունը.
- նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին *առանձին* ընկերության կողմից անվճար և վճարովի կարգով տրամադրված *ընդհանուր* եթերաժամանակը, ընկերության հաղորդումներին նրանց մասնակցության, ինչպես նաև նախընտրական քարոզչական գործունեության լուսաբանման *ընդհանուր* տևողությունը.
- նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններից, կուսակցությունների դաշինքներից *յուրաքանչյուրին բոլոր* ընկերությունների կողմից անվճար և վճարովի կարգով տրամադրված *ընդհանուր* եթերաժամանակը, հաղորդումներին մասնակցության, ինչպես նաև նախընտրական քարոզչական գործունեության լուսաբանման *ընդհանուր* տևողությունը.

- նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին *բոլոր* ընկերությունների կողմից անվճար և վճարովի կարգով տրամադրված *ընդհանուր* եթերաժամանակը, հաղորդումներին մասնակցության, ինչպես նաև նախընտրական քարոզչական գործունեության լուսաբանման ընդհանուր տևողությունը: